

ցաւ ցաւը՝ որ քունը բոլորովին փախաւ ,
ու չկրնարով օգնութիւն մը հասցնել
խեղճին՝ քիչ ատենէն մեռաւ : Եւ յոյն հո-
ղաթափները երբոր մեռնողին եղբայրը
հազաւ , ինքն ալ փնասուեցաւ , նախ
մորթը ուռեցաւ ու սկըդեցաւ , ետքը
սաստիկ ցաւեր զգարով՝ վերջապէս մե-
ռաւ : Եւ դիպուածը մեծ շփոթու-
թեան պատճառ եղաւ . վրայ հասաւ
բժիշկ մը , այլ և այլ հարցմունքներ
ըրաւ ու տեղեկութիւններ առաւ մեռ-
նողներուն հիւանդութեան վրայ . ու
երբոր ան մահառիթ հողաթափները
առջեւ դրին , սկսաւ ամենայն ուշա-
դրութեամբ քննել զանոնք , և տեսաւ
որ անոնցմէ մէկուն մէջ բոժոժաւոր օ-
ձի մը թիւնալից ակռան խրեր է եղեր
ու ծայրը վեր ցցուած կեցեր է , բայց
ոչ ոք տեսեր է : Հանեց ակռան հողա-
թափին մէջէն ու փորձելու համար թէ
արդեօք մեռնողներուն մահուան պատ-
ճառը իրաւցընէ ան է եղեր , նոյն ակ-
ռան շան մը ցուռկ խոթեց , որ քիչ ա-
տենէն ետքը սատկեցաւ :

Եւ ճամարիտ պատմութիւն կ'իմացուի
թէ խիստ չափազանցութիւն չէ նաեւ
անիկայ՝ որ կ'ըսեն թէ Եւֆրատիայի վայ-
րենի ազգերը իրենց նետերը բոժոժա-
ւոր օձին թոյնին մէջ թաթխելով՝ թոյ-
նին ուժը դարերով նետերուն վրայ կը
մնայ եղեր , և ով որ ան նետով զար-
նուի , թէպէտ և անփնաս տեղը , ճար
չկայ՝ կը մեռնի : Եւրոպացի բնախօս-
ներէն ոմանք կ'ըսեն թէ կինճերը մեծ
ջարդ կուտան բոժոժաւոր օձերուն ,
բայց () տիւպոն բնախօսը կը ջրէ ան
կարծիքը : Բոժոժաւոր օձը թռչուն-
ներ ալ կ'որսայ , բայց որսորդներուն
պէս համբերութեամբ երկայն ատեն
դարանելով և զարմանալի արագու-
թեամբ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վիպուած անախնէալ :

ՎԱՆԻ մը հողանտացի ճամբորդներ
թաթարստան ճամբայ ընելով՝ գտան
մեծ քարէ գերեզման մը որուն վրայ
գրած էր . Սեծ բաղդ կը գտնես՝ թէ
որ աս քարը շրջես : Սեծ յուսով աշխա-
տեցան քարը դարձուցին , բայց ինչպէս
պաղեցան՝ երբոր քարին այն կողմն ալ
գրած գտան , թէ այս առջի անգամը
չէ՝ որ յոյսդ պարապ ելեր է :

Ա Ռ Ա Կ

Ընդունի ծառը :

Ընդունի ծառին համար կը պատմեն
թէ առաջուց շատ բարձր չէր գետնէն ,
Անանկ որ ամէն ուզողն ալ կրնար
փրցնել պրտուզն ու անցնիլ երթալ :
Այս բանիս դրժարըն գալով ծառին
Ըսկըսաւ գանգատ ընել Վիոսին ,
Խնդրեց որ հասակն ալ բարձրացընէ :
Վիոս ալ ուզեց որ կամքը ընէ :
Գեղացիք առտուն ելեն տեսնեն որ ,
Կարճուկ ընկուզին բարձր հասակաւոր
Անտառներու մէջ մեծցած ծառի պէս
Ծայրն է հասուցեր երկինքը կարծես ,
Ու հըպարտացած գըլուխ շարժելով
Տերեւներն ալ է տուեր դէպ ի հով :
Բայց ուրախութիւնն երկայն չըբընց .
Գեղացին իր հին արհեստը յիշեց ,
Ձեռք հասնելու ճարն հառած տեսնելով
Ըսկըսաւ թափել քարով ու փայտով ,
Եւ այնչափ վեր վար զարկաւ ու կտորեց
Որ պրտուղ , տերեւ , ճիւղ՝ գետին փռուեց :
Խեղճ ընկուզենին խիստ ուշ իմացաւ :
Որ շատ բարձրանալն իրեն գէշ եղաւ :
Չարերէն կ'ուզեն որ ազատ մընաս . —
Շատ բարձրանալու ետեւ չըլտաս :